

Արձանագրություն №3/2013-2014

«Երևանի պետական համալսարան» պետական ոչ առևտրային կազմակերպության գիտական խորհրդի՝ 2013թ. դեկտեմբերի 17-ին տեղի ունեցած թիվ 3 նիստի

Նիստին ներկա էին գիտական խորհրդի 88 (ութսունութ) անդամներից 71-ը (յոթանասունմեկ): Նիստը նախագահում էր ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը:

Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Ամբիոնի վարիչի ընտրության մասին ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատում (Ձեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան):
2. Պրոֆեսորի, դոցենտի գիտական կոչումների շնորհում: (Ձեկ.՝ հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյան, բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյան)
3. ԵՊՀ զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին: (Ձեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)
4. ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի կատարման մասին: (Ձեկ.՝ ռեկտոր Ա. Հ. Սիմոնյան)
5. ԵՊՀ աշխատողների և սովորողների արտասահմանյան գործուղումների կազմակերպման կանոնակարգում փոփոխություններ կատարելու մասին: (Ձեկ.՝ պրոռեկտոր Գ.Գ. Գևորգյան)
6. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի 2013թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) կատարողականի (հունվար-նոյեմբեր) մասին: (Ձեկ.՝ գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)
7. «Երևանի պետական համալսարան» ՊՈԱԿ-ի 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) մասին: (Ձեկ.՝ գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյան)
8. ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2012-2013 ուս. տարվա գործունեության մասին: (Ձեկ.՝ մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյան)
9. Ընթացիկ հարցեր:

Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:

1. **Լսեցին.- ԵՊՀ 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագրի կատարման ընթացքի մասին:** Ռեկտոր Ա. Հ. Սիմոնյանը ընդհանուր գծերով ներկայացրեց ռազմավարական ծրագրի՝ 2012-2013 ուստարում նախատեսված գործողությունների կատարողականը՝

անդրադառնալով հետևյալ խնդիրներին. 1/ կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում, 2/տնտեսական և ենթակառուցվածքների զարգացում, 3/ Ուսումնառության, դասավանդման և գնահատման գործընթացների էական բարելավման համար նպաստավոր պայմանների և խթանող մեխանիզմների գործարկման շարունակում, 4/ հասարակայնության հետ կապերի հետագա զարգացման ապահովում և հանրային ծրագրերում Համալսարանի առավելագույնս ներգրավում, 5/ դասախոսական համակազմի համալրում և բարելավում և այլն:

Որոշեցին.-

1. Տալ հավանություն ԵՊՀ 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագրի՝ 2012-2013 ուստարում նախատեսված գործողությունների կատարողականին և ընդունել կատարողականի մասին զեկույցն ի գիտություն:
2. Հանդես գալ ԵՊՀ խորհրդի առջև՝ ԵՊՀ 2010-2014թթ. զարգացման ռազմավարական ծրագրի՝ 2012-2013 ուստարում նախատեսված գործողությունների կատարողականը հաստատելու միջնորդությամբ:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

2. **Լսեցին. - ԵՊՀ-ում կոռուպցիոն երևույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի կատարման մասին:** Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը ներկայացրեց միջոցառումների ծրագրի՝ 2012-2013թթ. նախատեսված գործողությունների կատարողականը՝ կենտրոնանալով հետևյալ խնդիրների վրա. 1/ կոռուպցիոն երևույթների դեմ պայքարը համակարգող հանձնաժողովի աշխատանքների շարունակումն ու բարելավումը, 2/ համալսարանական լրատվամիջոցներում երևույթին առնչվող նյութերի հրապարակումը, 3/ ուսանող-դասախոս երկկողմ պատշաճ շփումների մշակույթի արմատավորումը և այլն:

Որոշեցին. –

1. Տալ հավանություն Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երեվույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի՝ 2012-2013 թթ. նախատեսված գործողությունների կատարողականին և ընդունել կատարողականի մասին զեկույցն ի գիտություն:
2. Հանդես գալ ԵՊՀ խորհրդի առջև՝ Երևանի պետական համալսարանում կոռուպցիոն երեվույթների դեմ պայքարի համալիր միջոցառումների ծրագրի՝ 2012-2013 թթ. նախատեսված գործողությունների կատարողականը հաստատելու միջնորդությամբ:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Լսեցին. - Լսեցին. - Ֆակուլտետային ամբիոնի վարիչի ընտրության մասին ֆակուլտետների գիտական խորհուրդների ընդունած որոշումների հաստատման մասին:

ԵՊՀ գիտական խորհրդի մրցութային հանձնաժողովների նախագահներ Գ. Հ. Պետրոսյանը և Ա. Ա. Սահակյանը ներկայացրին ԵՊՀ ֆակուլտետների գիտական խորհուրդների որոշումներով ամբիոնի վարիչ ընտրված պրոֆեսորներին և դոցենտներին՝ նշելով զբաղեցրած պաշտոնը, հավակնած պաշտոնը, տվյալներ նրանց գիտամանկավարժական գործունեության վերաբերյալ:

Ֆակուլտետի գիտական խորհուրդների կողմից ընտրված և ԵՊՀ գիտական խորհրդի հաստատմանը ներկայացված ամբիոնի վարիչի պաշտոնի հավակնորդներն էին.

Հ/Հ	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքի վայրը, պաշտոնը (երբվանից)	Գիտական աստիճանը, կոչումը (մասնագիտ. շիֆր)	Ինչ պաշտոնի համար է դիմել
1.	Գասպարյան Սեդա Զեռոբի	անգլիական բանասիրության ամբ. վարիչ /1993 թ./	բանասիր. գիտ. դոկտոր /1994/ Ժ.02.07 - գերմանական լեզուներ պրոֆեսոր - 2002	անգլիական բանասիրության ամբ. վարիչի
2.	Բրուտյան Լիլիթ Գեորգիի	ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման ամբ. վարիչ/2006 թ./	բանասիր. գիտ. դոկտոր /1993/Ժ.02.03 – համեմատական և տիպաբանական լեզվաբանություն պրոֆեսոր – 2003	ռուսաց լեզվաբանության, տիպաբանության և հաղորդակցման ամբ. վարիչի
3.	Մանասյան Ալեքսանդր Սարգսի	տեսական փիլ. և տրամաբանության ամբ. վարիչ /2003 թ./	փիլ. գիտ. դոկտոր /1986/ Թ.00.01 – տես. փիլ. տրամաբանություն պրոֆեսոր – 1989 ՀՀ ԳԱԱ թղթ. անդ. - 2006	տեսական փիլ. և տրամաբան. ամբ. վարիչի
4.	Շահվերդյան Գայանե Միքայելի	սոց. հոգեբան. ամբ. վարիչ /2009 թ./	հոգեբան. գիտ. դոկտոր /1999/ ԺԹ.00.03 – սոց. հոգեբանություն պրոֆեսոր - 2006	սոցիալական հոգեբանության ամբ. վարիչի
5.	Քեռյան Գարիկ Միշայի	քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբ. վարիչ /2008 թ./	քաղաքական գիտ. դոկտոր /2003/ ԻԳ.00.02 – քաղ. ինստիտուտներ և գործընթացներ պրոֆեսոր - 2007	քաղաքական ինստիտուտների և գործընթացների ամբ. վարիչի
6.	Վարդազարյան Մարութ Երեմի	միջազգային հարաբ. և դիվանագիտ. ամբ. վարիչի պաշտոնակատար /2013 թ./	պատմ. գիտ. թեկնածու /1989/ ԻԳ.00.04 – միջազգային հարաբերություններ դոցենտ - 2006	միջազգային հարաբ. և դիվանագիտ. ամբ. վարիչի
7.	Առաքելյան Արամ Հմայակի	տնտեսագիտ. մեջ մաթ. մոդել. ամբ. վարիչ /2003/	տեխն. գիտ. դոկտոր /1988/ Ե.13.15 – մաթ. մոդելավորում, թվային մեթոդներ պրոֆեսոր - 1991	տնտեսագիտ. մեջ մաթ. մոդել. ամբ. վարիչի
8.	Թորոսյան Թորոս Շահենի	միջազգային տնտեսական հարաբ. ամբ. վարիչ /1992 թ./	տնտես. գիտ. դոկտոր /1987/ Ը.00.06 – համաշխ. տնտեսագիտություն պրոֆեսոր - 1989	միջազգային տնտեսական հարաբ. ամբ. վարիչի
9.	Մնացականյան Հայկ Գերասիմի	ֆինանսահաշվային ամբ. վարիչ /2008 թ./	տնտես. գիտ. դոկտոր /2013/ Ը.00.03 – ֆինանսներ, դրամաշրջանառ. և վարկ դոցենտ - 2007	ֆինանսահաշվային ամբ. վարիչի
10.	Հարությունյան Վլադիմիր Միխայիլի	Կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբ. վարիչ /1977 թ./	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /1979/ Ա.04.10 – կիսահաղորդիչների ֆիզիկա պրոֆեսոր – 1981 ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս - 1996	կիսահաղորդիչների ֆիզիկայի և միկրոէլեկտրոնիկայի ամբ. վարիչի
11.	Ավետիսյան Կարինե Ռուբենի	ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբ. վարիչ/2007 թ./	տնտեսագիտ. թեկնածու /2004/ Ը.00.01 – տեսական տնտեսագիտություն դոցենտ – 2008	ակտուարական և ֆինանսական մաթեմատիկայի ամբ. վարիչի
12.	Ավետիսյան Կարեն Լարիկի	ֆիզիկայի ֆակ.-ի բարձրագույն մաթեմ. ամբ. դոցենտ /2000 թ./	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /2010/Ա.01.00 – մաթեմատիկա, դոցենտ - 2007	մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակ.-ի ընդհանուր մաթեմատիկայի ամբ. վարիչի
13.	Մովսեսյան Ռուբեն Սուրենի	օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբ. վարիչ /2000 թ./	երկրաբանա-հանքաբան. գիտ. թեկնածու /1980/ ԻԳ.01.06 – օգտ. հան. հանք. երկրաբան., որոնում և հետախուզում ավագ գիտաշխատող - 1989	օգտակար հանածոների հանքավայրերի որոնման և հետախուզման ամբ. վարիչի
14.	Հայրոյան	ջրաերկրաբան. և	երկրաբանա-հանքաբան. գիտ.	ջրաերկրաբան. և

	Սարգիս Հրաչիկի	ճարտարագիտական երկր. ամբ. վարիչի պաշտոնակատար /2000 թ./	թեկնածու /1989/ ԻԳ.01.03 – ընդհ. երկրաբան. հիդրոերկրաբան., ճարտարագիտ. երկրաբան. դոցենտ - 2004	ճարտարագիտական երկր. ամբ. վարիչի
15.	Սուվարյան Սեյրան Ռաֆիկի	սոցիալ-տնտ. աշխարհ. ամբ. դոցենտ /2001 թ./	աշխարհ. գիտ. թեկնածու /2002/ ԻԳ.03.02 – տնտեսական, սոցիալական և քաղ. աշխարհ.դոցենտ - 2006	սերվիսի ամբ. վարիչի
16.	Խաչատրյան Շահեն Վոլոդյայի	ռեզիոնալ երկրաբան., պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի ամբ. վարիչի պաշտոնակատար /2009 թ./	երկրաբան. գիտ. թեկնածու /2001/ ԻԳ.01.06 - օգտակար հանածոների հանքավայրերի, երկրաբան., որոնում, հետախուզում դոցենտ - 2008	ռեզիոնալ երկրաբան., պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի ամբ. վարիչի
17.	Պոտոսյան Աբել Հարությունի	սոցիալ-տնտեսական աշխարհագր. ամբ. դոցենտ /2004 թ./	աշխարհ. գիտ. թեկնածու /1997/ ԻԳ.03.02 – տնտեսական , սոց. և քաղ. աշխարհագր./դոցենտ - 2004	սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբ. վարիչի
18.	Հարությունյան Գոհար Հրայրի	տեսական ֆիզիկայի ամբ. պրոֆեսոր /2011 թ./	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /2000/ Ա.04.02 – տեսական ֆիզիկա, պրոֆեսոր - 2010	տեսական ֆիզիկայի ամբ. վարիչի
19.	Դավյան Եվա Բենոյի	մոլեկուլային ֆիզիկայի ամբ. վարիչ /2006 թ./	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /2003/ Ա.04.00 – ֆիզիկա, պրոֆեսոր - 2007	մոլեկուլային ֆիզիկայի ամբ. վարիչի
20.	Բալաբեկյան Անահիտ Ռաֆիկի	միջուկային ֆիզիկայի ամբ. դոցենտ /2003 թ./	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /2010/ Ա.04.16 – միջուկի, տարրական մասնիկների և տիեզերական ճառագայթների ֆիզիկա՝ դոցենտ - 2007	միջուկային ֆիզիկայի ամբ. վարիչի
21.	Կիրակոսյան Ալբերտ Ավետիսի	պինդ մարմնի ֆիզիկայի ամբ. վարիչ /2000 թ./	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /1991/ Ա.04.07 – կոնդենսացված վիճակի ֆիզիկա պրոֆեսոր - 2002	պինդ մարմնի ֆիզիկայի ամբ. վարիչի
22.	Մուրադյան Ատոմ Ժորայի	ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբ. պրոֆեսոր /2000 թ./	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /1992/ Ա.04.00 – ֆիզիկա պրոֆեսոր - 2006	ընդհանուր ֆիզիկայի և աստղաֆիզիկայի ամբ. վարիչի
23.	Ալլահվերդյան Ռոման Բախշիի	օպտիկայի ամբ. վարիչ /2012 թ./	ֆիզմաթ. գիտ. դոկտոր /2001/ Ա.04.05 – օպտիկա պրոֆեսոր - 2008	օպտիկայի ամբ. վարիչի

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը նիստի մասնակիցներին առաջարկեց հարցեր ուղղել ամբիոնի վարիչի մրցույթի մասնակիցներին: Հարցեր չհնչեցին:

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանի առաջարկով կազմվեց հաշվիչ հանձնաժողով՝ հետևյալ անդամներով՝

1. Հովսեփյան Մուշեղ (նախագահ)
2. Սահակյան Անահիտ
3. Սողոմոնյան Մենուա
4. Կոստանյան Վահան
5. Մարտիրոսյան Նարինե

Կազմակերպվեց փակ, գաղտնի քվեարկություն, որին մասնակցեցին նիստին ներկա 71 անդամները: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Մ. Հովսեփյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
1.	Գասպարյան Սեդա Զերորի	65	6	0

2.	Բրուտյան Լիլիթ Գեորգիի	65	6	0
3.	Մանասյան Ալեքսանդր Սարգսի	64	7	0
4.	Շահվերդյան Գայանե Միքայելի	61	10	0
5.	Քեռյան Գարիկ Միշայի	64	5	2
6.	Վարդազարյան Մարութ Երեմի	65	6	0
7.	Առաքելյան Արամ Հմայակի	68	3	0
8.	Թորոսյան Թորոս Շահենի	67	4	0
9.	Մնացականյան Հայկ Գերասիմի	66	5	0
10.	Հարությունյան Վլադիմիր Սիխայիի	69	2	0
11.	Ավետիսյան Կարինե Ռուբենի	68	3	0
12.	Ավետիսյան Կարեն Լարիկի	68	3	0
13.	Մովսեսյան Ռուբեն Սուրենի	69	2	0
14.	Հայրոյան Սարգիս Հրաչիկի	70	1	0
15.	Սուվարյան Սեյրան Ռաֆիկի	67	4	0
16.	Խաչատրյան Շահեն Վոլոդյայի	68	0	3
17.	Պոտոսյան Աբսել Հարությունի	69	2	0
18.	Հարությունյան Գոհար Հրայրի	67	4	0
19.	Գալյան Եվա Բենոյի	68	3	0
20.	Բալաբեկյան Անահիտ Ռաֆիկի	69	2	0
21.	Կիրակոսյան Ալբերտ Ավետիսի	71	0	0
22.	Մուրադյան Ատոմ Ժորայի	70	1	0
23.	Ալլահվերդյան Ռոման Բախշիի	69	2	0

Որոշեցին. –

1. Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:
2. Քվեարկության արդյունքների հիման վրա հավակնորդներին համարել ընտրված իրենց հայցած պաշտոններում:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

1. **Լսեցին. – Պրոֆեսորի և դոցենտի կոչում շնորհելու մասին:** Հումանիտար մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Գ. Հ. Պետրոսյանը և բնագիտական մասնագիտությունների գծով մրցութային հանձնաժողովի նախագահ Ա. Ա. Սահակյանը ներկայացրեցին նաև պրոֆեսորի և դոցենտի կոչման հավակնորդների մասին ամփոփ տվյալներ:

Պրոֆեսորի կոչման հավակնորդն էր.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Վաղարշյան Արթուր Գրիշայի	Պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ
2.	Դիլբանդյան Սամվել Ադվանի	Քրեական դատավար. և կրիմին ամբիոնի վարիչ
3.	Զաքոյան Վլադիմիր Ռուբենի	Ֆիզ դաստ և սպորտի ամբիոնի դոցենտ

Դոցենտի կոչման հավակնորդներն էին.

	Ազգանուն, անուն, հայրանուն	Աշխատանքային վայրը, պաշտոնը
1.	Ներսեսյան Գոհար Միշայի	հայոց լեզվի ամբ. ասիստենտ`
2.	Գալստյան Արշալույս Մերուժանի	հայ գրականության ամբ. ասիստենտ
3.	Չախոյան Արթուր Սամվելի	քրեական դատավարության և կրիմինալիստիկայի ամբ. ուս. լաբորատորիայի վարիչ
4.	Մելիքջանյան Լիպարիտ Ռոբերտի	քաղ. իրավունքի ամբ. ասիստենտ
5.	Դանիելյան Արմեն Մերգեյի	քաղ. դատավարության ամբ. ասիստենտ
6.	Ղազարյան Ֆեդիկ Կարապետի	հայոց պատմության ամբ. ասիստենտ
7.	Կոբեյան Արթուր Թենգիզի	սոցիալական հոգեբանության ամբ. ասիստենտ
8.	Բալայան Տիգրան Կիմի	միջազգ. հարաբ. և դիվանագիտ. ամբ. ասիստենտ
9.	Գեղամյան Նունե Գրիշայի	սոցիալական աշխ. և սոց. տեխնոլոգիաների ամբ. ասիստենտ
10.	Օհանյան Հռիփսիմե Լևոնի	ռոմանական բանասիրության ամբ. ասիստենտ
11.	Պողոսյան Գայանե Հմայակի	կենսաֆիզիկայի ամբ. ասիստենտ
12.	Մանուկյան Նինա Վարդգեսի	քարտեզագր. և գեոմորֆոլոգիայի ամբիոնի ասիստենտ

Նույն հաշվիչ հանձնաժողովը կազմակերպեց պրոֆեսորի և դոցենտի կոչումների հավակնորդների քվեարկությունը ևս: Քվեարկությանը մասնակցեց 71 հոգի: Հաշվիչ հանձնաժողովի նախագահ Մ. Հովսեփյանը ներկայացրեց քվեարկության արդյունքները.

h/h	Ազգանուն, անուն, հայրանուն	կողմ	դեմ	անվավեր
1.	Ներսեսյան Գոհար Միշայի	69	1	1
2.	Գալստյան Արշալույս Մերուժանի	68	2	1
3.	Չախոյան Արթուր Սամվելի	66	4	1
4.	Մելիքջանյան Լիպարիտ Ռոբերտի	69	1	1
5.	Դանիելյան Արմեն Մերգեյի	68	2	1
6.	Ղազարյան Ֆեդիկ Կարապետի	67	3	1
7.	Կոբեյան Արթուր Թենգիզի	65	5	1
8.	Բալայան Տիգրան Կիմի	67	3	1
9.	Գեղամյան Նունե Գրիշայի	68	2	1
10.	Օհանյան Հռիփսիմե Լևոնի	69	1	1
11.	Պողոսյան Գայանե Հմայակի	68	2	1
12.	Մանուկյան Նինա Վարդգեսի	67	3	1

Որոշեցին. – 2.1 Հաստատել փակ, գաղտնի քվեարկության արդյունքները:

1.2 Վերոնշյալ հավակնորդներին շնորհել պրոֆեսորի և դոցենտի գիտական կոչումներ:

1.3 Տասնհինգ օրվա ընթացքում նրանց գործերը ներկայացնել ՀՀ ԲՈՀ՝ շնորհիված գիտական կոչումները հաստատելու և դիպլոմներ տալու համար

4. **Լսեցին.** - <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2013թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) կատարողականը (հունվար-նոյեմբեր) հաստատելու մասին: Գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյանը ըստ հոդվածների ներկայացրեց կատարողականը, որը նախապես տրամադրվել էր գիտխորհրդի անդամներին:

Արտահայտվեցին. – ռեկտոր Ա. Շ. Սիմոնյանը, մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետի դեկան Ա. Սահակյանը, իրավագիտության ֆակուլտետի դեկան Գ. Ղազինյանը:

Որոշեցին. – Ընդունել ի գիտություն:

5. **Լսեցին.** - <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի (Բյուջե) մասին: Գլխ. հաշվապահ Ռ. Գ. Գրիգորյանը ներկայացրեց նախահաշիվն ըստ հոդվածների:

Արտահայտվեցին. – Ռեկտոր Ա. Շ. Սիմոնյանը, դիսկրետ մաթեմատիկայի ամբիոնի վարիչ Ա. Ալեքսանյանը, տնտեսագիտության ֆակուլտետի դեկան Հ. Սարգսյանը, ռադիոֆիզիկայի ֆակուլտետի դեկան Յ. Վարդանյանը, ԻԿՄ ֆակուլտետի դեկան Վ. Դումանյանը:

Որոշեցին. -

1. Տալ հավանություն <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագծին:
2. <<Երևանի պետական համալսարան>> ՊՈԱԿ-ի 2014թ. եկամուտների և ծախսերի նախահաշվի նախագիծը ներկայացնել ԵՊՀ խորհրդի քննարկմանն ու հաստատմանը:
3. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

6. **Լսեցին.** - **ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի հաշվետվությունը 2012-2013 ուս. տարվա գործունեության մասին:** Մասնաճյուղի տնօրեն Ս. Ա. Առաքելյանը կանգ առավ մի շարք խնդիրների վրա. 1/ Ուսանողակենտրոն միջավայրի ամրապնդման ուղղությամբ ձեռնարկված քայլերը, 2/ կրթօջախի նյութատեխնիկական բազայի նորացումը, 3/ մասնաճյուղի համագործակցության շրջանակների ու ոլորտների ընդլայնում և բազմազանեցում և այլն:

Որոշեցին. –

1. Հավանություն տալ ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի 2012-2013 ուստարվա գործունեությանը:
2. Որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝

Ա. Շ. Սիմոնյան

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ. Ա. Սողոմոնյան

27.12.2013թ.